ԱԺԲԳ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՆԱԽԱԳԻԾ) ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ

## ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- բյուջետային տարին սկսվելուց առնվազն 90 օր առաջ՝ գործնականում հոկտեմբերի սկիզբ — Նախագծի ներկայացում Ազգային ժողով
- գործնականում հոկտեմբերի վերջ կամ նոյեմբերի սկիզբ — Նախնական քննարկումներ մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում
- նախնական քննարկումների ավարտից հետո մինչև 4 օր — Պատգամավորների և խմբակցությունների կողմից գրավոր առաջարկների ներկայացում Ազգային ժողովի աշխատակազմ
- գործնականում 1 օրվա ընթացքում — Ներկայացված առաջարկություններն Ազգային ժողովի Աշխատակազմն ուղարկում է Կառավարություն

## ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐՈՒՄ

- Կառավարության կողմից Նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացում՝ առանց փոփոխության կամ իր նախաձեռնությամբ կամ գրավոր առաջարկների հիման վրա լրամշակելով
- ոչ ուշ, քան բյուջետային տարվան նախորդող նոյեմբեր ամսվա առաջին հերթական նիստերում — Նախագծի քննարկում Ազգային ժողովի նիստերում
- առնվազն 4 օրով — Նախագծի քննարկման ընդմիջում
- 24 ժամվա ընթացքում — Պատգամավորների և խմբակցությունների կողմից առաջարկների ներկայացում Ազգային ժողովի աշխատակազմ
- 1 ժամվա ընթացքում — Ներկայացված առաջարկություններն Ազգային ժողովի աշխատակազմն ուղարկում է Կառավարություն

## ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ/ՈՉ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

- գործնականում նոյեմբեր - դեկտեմբեր — Լրամշակված նախագծի քննարկում Ազգային ժողովի նիստերում
- Եթե Նախագծով նախատեսվում է բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը քվեարկության է դրվում դրանց ընդունումից հետո
- գործնականում դեկտեմբեր — Նախագծի վերջնական տարբերակի քննարկում և ընդունում/ոչ
- քվեարկությունից հետո երկշաբաթյա ժամկետում — Նախագծի չընդունման դեպքում Կառավարության կողմից նոր նախագծի ներկայացում ԱԺ /քննարկվում և քվեարկվում է մեկ ամսվա ընթացքում/
- Կառավարությունը պետական բյուջեի մասին օրենքի նախագծի առնչությամբ, սահմանված կարգով, կարող է դնել իր վստահության հարցը
- Կառավարության կողմից իր վստահության հարցի բարձրացման և վստահություն հայտնելու մասին որոշման ընդունման դեպքում նախագիծը համարվում է ընդունված որպես օրենք
- երկշաբաթյա ժամկետում — Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման չընդունման դեպքում Ազգային ժողովի քննարկմանը Նախագծի ներկայացում՝ նոր կառավարության ծրագիրը հաստատվելուց հետո /քվեարկության է դրվում ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում/